

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Հ.ՄԻՄԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նախարար,

ՀՀ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման  
համաձայն, ներկայացնում եմ ՀՀ Արմավիրի մարզի Ապագայի ԱԿԽ հանքավայրում  
2023թ.-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

Հարգանքով՝

«ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ տնօրեն՝

Մ.Խաչատրյան



15.04.2024

|   |  |  |  |                     |                                   |                  |                                   |           |           |
|---|--|--|--|---------------------|-----------------------------------|------------------|-----------------------------------|-----------|-----------|
| <b>Հողային ծածկույթ</b>   | Հանքավայրի շրջակայքում                   | - հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանական հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը - հողերի կազմաբանությունը | նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, | - տարեկան մեկ անգամ | 22                                | Որոշվող ցուցանիշ | Նմուշի ծածկագիր և վերցման տեղը    |           |           |
|   |  | - հումուսի պարունակությունը,   |  |                     | N1<br>8431521<br>4442943<br>H-849 |                  | N2<br>8431258<br>4442780<br>H-847 |           |           |
|   |  |  |  |                     |                                   | 1.               | Ջրածնային ցուցիչ                  | 6.5       | 6.7       |
|   |  |  |  |                     |                                   | 2.               | Իոնափոխանակում մգ/էկվ/100գ        | 17,8      | 20,3      |
|   |  |  |  |                     |                                   | 3.               | Fe, %                             | 4,68      | 4,76      |
|   |  |  |  |                     |                                   | 4.               | Mn, %                             | 0,16      | 0,2       |
|   |  |  |  |                     |                                   | 5.               | Zn, %                             | 0,002     | 0,001     |
|   |  |  |  |                     |                                   | 6.               | Cu, %                             | 0,005     | 0,003     |
|   |  |  |  |                     |                                   | 7.               | Mo, %                             | չի հայտն. | չի հայտն. |
|   |  |  |  |                     |                                   | 8.               | Cr, %                             | 0,0002    | 0,001     |
|   |  |  |  |                     |                                   | 9.               | Co, %                             | 0,0005    | 0,0001    |
|   |  |  |  |                     |                                   | 10.              | Hg, %                             | չի հայտն. | չի հայտն. |
|   |  |  |  |                     |                                   | 11.              | As, %                             | չի հայտն. | չի հայտն. |
|   |  |  |  |                     |                                   | 12.              | Pb, %                             | < 0,0001  | < 0,0001  |
|   |  |  |  |                     |                                   | 13.              | Ni, %                             | 0,03      | 0,02      |
|   |  |  |  |                     |                                   | 14.              | Sb, %                             | չի հայտն. | չի հայտն. |
|   |  |  |  |                     |                                   | 15.              | Cd, %                             | < 0,0001  | < 0,0001  |
|   |  |  |  |                     |                                   | 16.              | B                                 | 0.002     | 0.001     |
|   |  |  |  |                     |                                   | 17.              | Ba                                | 0.03      | 0.04      |
|   |  |  |  |                     |                                   | 18.              | Հումուս, մգ/կգ                    | 2,8       | 3,3       |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան | տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների առկայությունը, պոպուլյացիայի փոփոխություն   | նկարագրություն,                              | տարեկան մեկ անգամ   | <b>Տես բացատրագրում</b>           |                  |                                   |           |           |

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2023թ.)**

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը   | Ցուցանիշը   | Մշտադիտարկումների տեսակը   | Նվազագույն հաճախականությունը            | Արդյունքը   |
|---------------------------|---|---|--|---|---|
| Մակերևութային ջրեր        | -   | ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր                                      | -  | -                                       | -   |
| Ստորերկրյա ջրեր           | -   | -   | -  | -                                       | -   |
| Մթնոլորտային օդ           | բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօդազորման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, ըստ քամիների վարդերի գերակշռող ուղղությունների արտանետումների աղբյուրից մինչև 2 կմ հեռավորություն | - հանքավոշի, (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, | նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով | շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ | Անօրգանական փոշի – 0,67տ<br>Ազոտի երկօքսիդ – 0,091տ<br>Սահմ.ածխաջրածիններ – 0,02տ<br>Ածխածնի օքսիդ – 0,046տ<br>Կախված մասնիկներ- 0,007տ<br>Ծծմբային անհիդրիդ- |

|  |  |   |   |   |                                  |
|--|--|---|---|---|----------------------------------|
| Աղմուկ և թրթռում   | Բացահանք,<br>Արտաշար բնակավայր<br>բնակավայր              |   |   |   | Միջինը երեք եռամսյակների՝ 48.2Դբ |
| Ոչ վտանգավոր թափոններ  | -  | - | - | - | -                                |
| Վառելանյութի պահեստարաններ                                     | -  | - | - | - | -                                |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ | -  | - | - | - | -                                |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակը         | Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական զննում |   |   |   |                                  |

Տեղեկատվությունը ներկայացրեց «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ, Ապագայի ԱԿԻՏ հանքավայր

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Դեկավար \_\_\_\_\_  
(պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_

(ստորագրությունը, անիսը, ամսաթիվը, տարեթիվը)



**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՊԱԳԱՅԻ ԱԿԽ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ  
2023Թ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀՀ Արմավիրի մարզի Ապագայի ԱԿԽ Հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, Մեծամոր համայնքի Արտաշար բնակավայրի վարչական սահմաններում:

Մոտակա բնակավայրերն են Գայ, Հայկաշեն, Երասխահուն, Արտաշար և Ապագա գյուղերը, որոնց հետ հանքավայրը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Հանքավայրը զբաղեցնում է 31.98հա մակերես և եզրագծվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի).

- |                                  |                                   |
|----------------------------------|-----------------------------------|
| 1. Y=8431761.0000 X=4442758.0000 | 9. Y=8431294.0000 X=4442767.0000  |
| 2. Y=8431594.0000 X=4442679.0000 | 10. Y=8431375.0000 X=4442698.0000 |
| 3. Y=8431554.0000 X=4442708.0000 | 11. Y=8431842.0000 X=4442416.0000 |
| 4. Y=8431702.5214 X=4442904.6221 | 12. Y=8431959.0000 X=4442154.0000 |
| 5. Y=8431730.0000 X=4442941.0000 | 13. Y=8432136.0000 X=4442140.0000 |
| 6. Y=8431692.0000 X=4442955.0000 | 14. Y=8432209.2138 X=4442436.1093 |
| 7. Y=8431614.0000 X=4443021.0000 | 15. Y=8431976.4170 X=4442703.1268 |
| 8. Y=8431412.9089 X=4443036.4699 | 1. Y=8431761.0000 X=4442758.0000  |

Հաշվետու տարում հանքավայրի տարածքում իրականացվել են հողային ծածկույթի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի և աղմուկի մշտադիտարկումներ, որոնց արդյունքները բերվում են ստորև:

**1. Հողային ծածկույթ**

Հանքավայրի շրջանում տարածված են ոռոգելի գորշ մնացորդային կավային հողեր:

Հանքավայրի մակերևույթի զգալի մասից հողային ծածկույթը բացակայում է, դրանք հանվել են ավելի վաղ իրականացված արդյունահանման աշխատանքների ժամանակ:

Օգտակար հաստվածքը ծածկող մակաշերտի հզորությունը (պահպանված տեղամասերում) հասնում է մինչև 1.3մ: Դրանք իրենցից ներկայացնում են աղակալված, ավազակոպնային խառնուրդի հետ միախառնված կավային, կավավազային, ավազակավային մեխանիկական կազմի փուխր այլուվիալ առաջացումներ:

Հանքավայրի մերձակայքից վերցված հողի նմուշների քիմիական կազմի որոշումների արդյունքները բերված են աղ.1-ում:

## Հանքավայրի մերձակայքի հողի նմուշների քիմիական կազմը

| ՀՀ  | Որոշվող<br>ցուցանիշ           | Նմուշի ծածկագիր<br>և վերցման տեղը |                                   |
|-----|-------------------------------|-----------------------------------|-----------------------------------|
|     |                               | N1<br>8431521<br>4442943<br>H-849 | N2<br>8431258<br>4442780<br>H-847 |
| 1.  | Ջրածնային ցուցիչ              | 6.5                               | 6.7                               |
| 2.  | Իոնափոխանակում<br>մգ/էկվ/100գ | 17,8                              | 20,3                              |
| 3.  | Fe, %                         | 4,68                              | 4,76                              |
| 4.  | Mn, %                         | 0,16                              | 0,2                               |
| 5.  | Zn, %                         | 0,002                             | 0,001                             |
| 6.  | Cu, %                         | 0,005                             | 0,003                             |
| 7.  | Mo, %                         | չի հայտն.                         | չի հայտն.                         |
| 8.  | Cr, %                         | 0,0002                            | 0,001                             |
| 9.  | Co, %                         | 0,0005                            | 0,0001                            |
| 10. | Hg, %                         | չի հայտն.                         | չի հայտն.                         |
| 11. | As, %                         | չի հայտն.                         | չի հայտն.                         |
| 12. | Pb, %                         | < 0,0001                          | < 0,0001                          |
| 13. | Ni, %                         | 0,03                              | 0,02                              |
| 14. | Sb, %                         | չի հայտն.                         | չի հայտն.                         |
| 15. | Cd, %                         | < 0,0001                          | < 0,0001                          |
| 16. | B, %                          | 0.002                             | 0.001                             |
| 17. | Ba, %                         | 0.03                              | 0.04                              |
| 18. | Հումուս, %                    | 2,8                               | 3,3                               |

## 2. Մթնոլորտային օդ

Մթնոլորտ արտանետվող վտանգավոր նյութերի քանակները որոշելու նպատակով կատարվել են գործիքային չափումներ: Չափումները կատարվել են շաբաթական մեկ անգամից մինչև ամիսը մեկ անգամ 24 ժամ տևողությամբ:

2023թ. ընթացքում Այազայի ԱԿԽ հանքավայրում իրականացված արդյունահանման աշխատանքների հետևանքով մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի փաստացի միջինացված արժեքներն հետևյալն են՝

Անօրգանական փոշի – 0,67տ

Ազոտի երկօքսիդ – 0,091տ

Սահմ.ածխաջրածիններ – 0,02տ

Ածխածնի օքսիդ – 0,046տ

Կախված մասնիկներ- 0,007տ

### 3. Բուսական և կենդանական աշխարհ

Ապագայի հանքավայրի շրջանի բուսականությունը ներկայացված է ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով:

Հանքավայրի շրջանին բնորոշ են օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացող (*Elytrigia repens*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերև (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), փշոտ կապար (*Capparis spinosa*) և սովորական եղեգ (*Phragmites communis*) բուսատեսակները:

Կարմիրգրքային բուսատեսակներ հանքավայրի շրջանում չեն հայտնաբերվել:

Հանքավայրի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային-անապատային լանդշաֆտներին բնորոշ, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով:

Երկկենցաղներից և սողուններից հանքավայրի մերձակայքում հանդիպել են դողոշներ, գորտեր, մողեսներ և լորտու տեսակի օձ:

Հանքավայր տանող ճանապարհի հարևանությամբ մեկ անգամ հանդիպել է աղվես:

Բավականին հաճախ հանդիպել է դաշտամուկ:

Թռչուններից հաճախ հանդիպել է դաշտային ծիծեռնակը:

Հանքավայրի մերձակայքում խոշոր կաթնասունների կամ թռչունների բներ, բնադրավայրեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհի կարմիրգրքային տեսակներ չեն հայտնաբերվել:

### 4. Աղմուկ, թրթռումներ

Չայնաչափի օգնությամբ ցերեկային և գիշերային ժամերին պարբերաբար իրականացվել են աղմուկի չափումներ: Ցերեկային ժամերին ծանրաբեռնված աշխատանքային ռեժիմում աղմուկի մակարդակը գրանցվել է 67 դԲԱ: Գիշերային ժամերին աղմուկի մակարդակը չի գերազանցել 45 դԲա-ը:

2023թ. ընթացքում հանքավայրում արդյունահանման աշխատանքներն իրականացվել են ընդհատումներով, այդ իսկ պատճառով աղմուկի միջին մակարդակը չի գերազանցել 48,2 դԲԱ-ը:

Հաշվետվությունն ու բացատրագիրը  
կազմեց ԱԶ Շ.Խաչատրյանը

